

ՀՐԱՎԵՐ

ՅԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

Նախագծում և հեղինակային հսկողություն /ՀՀ Լոռու, Վայոց Ձորի, Շիրակի, Արագածոտնի, Տավուշի, Գեղարքունիքի մարզեր, ջրամատակարարման համակարգի վերակառուցում 2015թ. / RACP/TA/QCBS/2015/068
Նախագծում և հեղինակային հսկողություն. /ՀՀ Տավուշի, ՀՀ Վայոց Ձորի մարզեր, ոռոգման ներտնտեսային ցանցի վերակառուցում 2015թ. / RACP/TA/QCBS/2015/072

Ամսաթիվ՝ 03. 04. 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

"ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ" ԾՐԱԳԻ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ **ՈՐԱԿԻ և ԳՆԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ**

ՄԶՕՅ ՓՈԽՆԱՌՈՒԹՅՈՒՆ No - 1390P

Սույն "Յետաքրքրության հայտ ներկայացնելու հրավեր"-ը հետևում է սույն ծրագրի համար Ընդհանուր գնումների ծանուցմանը, որը տպագրվել է UN Development Business **UN331** թիվ **802**, 24 Հունիսի, 2011թ-ին:

Հայաստանի Հանրապետությունը /այսուհետ՝ Փոխառու/ փոխառություն է ստացել Գյուղական զարգացման Միջազգային հիմնադրամից /այսուհետ՝ ԳԶՄՀ/ "Գյուղական Կարողությունների ստեղծում" ծրագիրը /այսուհետ՝ ԳԿՍԾ/ իրականացնելու համար և նպատակ ունի գումարների մի մասն օգտագործել սույն խորհրդատվական ծառայությունները ձեռք բերելու համար:

ՀՀ ԿԼ "Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ" ՊՀ-ն /այսուհետ՝ ԾԻԳ/ Տավուշի, Լոռու, Արագածոտնի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի և Շիրակի մարզերի համայնքային ջրամատակարարման և ոռոգման ներտնտեսային ցանցի նախագծային աշխատանքների իրականացման համար Խորհրդատուների ընտրության առաջիկա մրցույթին մասնակցելու նպատակով բոլոր շահագրգիռ կազմակերպություններին հրավիրում է ներկայացնել Յետաքրքրության հայտեր ներքոհիշյալ բոլոր ծրագրերի համար, ջրամատակարարման համակարգի կամ ոռոգման ներտնտեսային ցանցի վերակառուցման համար:

Ջրամատակարարման համակարգի վերակառուցում

"ՀՀ Տավուշի մարզի Բաղանիս, Պտղավան համայնքներ", , "ՀՀ Շիրակի մարզի Իսահակյան, Անիպենգա, Նորշեն, Ջրափի, Հայկաձոր, Շիրակավան, Արևիկ համայնքներ" , "ՀՀ Արագածոտն մարզի Նոր Եղեսիա, Լուսազյուղ, Շենավան, Արագածավան համայնքներ, "ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնք" , ՀՀ Գեղարքունիքի մարզի Թթուջուր համայնք" , " ՀՀ Վայոց Ձորի մարզի Ռինդ համայնք":

Ոռոգման ներտնտեսային ցանցի վերակառուցում

"ՀՀ Տավուշի մարզի Լճկաձոր, Արճիս, Պտղավան, Դեբեդավան, Հաղթանակ, Բերդավան համայնքներ, "ՀՀ Վայոց Ձորի մարզի Ազատեկ, Արին, Վերնաշեն, Գետափ, Ելփին, Արենի համայնքներ":

Աշխատանքների նպատակը՝

Խորհրդատուն պետք է իրականացնի ջրամատակարարման համակարգի վերակառուցման, կամ ոռոգման ներտնտեսային ցանցի վերակառուցման կամ բոլոր վերոհիշյալ ծրագրերի համար նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման և շինարարության ընթացքում հեղինակային հսկողության մասնագիտական խորհրդատվական ծառայություններ:

Հայտում պետք է ներառվեն հետևյալ փաստաթղթերը.

- Դիմում ԾԻԳ-ի տնօրենի անունով /նշելով թե որ ծածկագրով մրցույթին է ցանկանում մասնակցել; /RACP/TA/QCBS/2015/068 կամ RACP/TA/QCBS/2015/072/
- Պետական գրանցման վկայականի պատճենը;
- Յետաքրքրության հայտը ստորագրողի լիազորագիրը;
- Վերջին 5 տարիների ընթացքում ոռոգման և ջրամատակարարման ոլորտներում իրականացված նախագծային աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, ներառյալ կառույցների և պատվիրատուների անվանումները, պայմանագրային արժեքները, իրականացման տարեթիվը և այլն ;
- Նախագծային աշխատանքների կատարման համար գործիքների, սարքերի, տրանսպորտային միջոցների, համակարգչային ու գրասենյակային տեխնիկաների ցանկը;
- Յետաքրքրության հայտը համատեղ ձեռնարկատիրական գործունեության սկզբունքով ներկայացնելու դեպքում պայմանագրի պատճենը;
- Աշխատակազմի ցանկը և աշխատանքային փորձառության վերաբերյալ տեղեկատվությունը (CV),
- Նախագծային աշխատանքների իրականացման համապատասխան արտոնագրի /լիցենզիայի/ պատճենը;
- այլ տեղեկատվություն, որն անհրաժեշտ կհամարի հայտատուն:

Կարծ ցանկի կազման նպատակով կազմակերպությունների գնահատման չափորոշիչներն են՝

Ոռոգման ծրագրերի համար

- Վերջին հինգ տարիների ընթացքում ընդհանուր փորձառություն ոռոգման ծրագրերի նախագծային աշխատանքների իրականացման;
- Վերջին հինգ տարիների ընթացքում հատուկ փորձառություն ոռոգման ներտնտեսային ցանցերի ծրագրերի նախագծային աշխատանքների իրականացման

Ջրամատակարարման ծրագրերի համար

- Վերջին հինգ տարիների ընթացքում հատուկ փորձառություն գյուղական բնակավայրերում ջրամատակարարման ծրագրերի նախագծային աշխատանքների իրականացման;
- Վերջին հինգ տարիների ընթացքում հատուկ փորձառություն քաղաքային բնակավայրերում ջրամատակարարման ծրագրերի նախագծային աշխատանքների իրականացման

Չետաքրքրության հայտը ներկայացվում է հայերեն, 1 բնօրինակ և 1 պատճեն:

Աշխատանքների իրականացման ենթադրվող ժամկետը՝ մոտ 3 ամիս:

Խորհրդատուն ընտրվելու է ԳԶՄՀ-ի կողմից 2010թ. սեպտեմբերին հրապարակված Գնումների ուղեցույցով սահմանված ընթացակարգերի համաձայն: Ավելի մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ ստորև նշված հասցեով ժամը 09. 00-18. 00:

Չետաքրքրության հայտերը պետք է ներկայացնել նշված հասցեով մինչև 2015թ. ապրիլի 13-ը, ժ. 18. 00:

***ՀՀ ԿԱ “Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի
իրականացման գրասենյակ” ՊՀ
Տնօրեն՝ Աշոտ Վարդանյան***

***Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, 6 հարկ;
Հեռախոս՝ 374 10 – 54 – 65 -10; Ֆաքս՝ 374 10 – 58 – 80 -58;
e-mail: procurement@rado.am, վեբ-կայք: www.raed.am***